ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 3-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Դեկտեմբերի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» շարականի բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 9-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Դեկտեմբերի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովսեփ քհն. Հակոբյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 15-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում բանահյուսություն՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 80-ամյակին:

Հանդիսության բացումը կատարում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: Մեծ բանաստեղծի կյանքի և գրական վաստակի մասին բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դասարանական բաժնի հայոց լեզվի և գրականության դասախոս Արամ Սահակյանը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի ուսանողները հանդես են գալիս Եղիշե Չարենցի գործերի արտասանությամբ: Բ լսարանի ուսանող Հովհաննես Ղազարյանն արտասանում է «Մորս համար գազել»-ը, նույն լսարանի ուսանող Վաչագան Ավետիքյանը՝

«Ամբոխները խելագարված» պոեմից հատվածներ, Ա լսարանի ուսանող Հայկ Չիլինգարյանը՝ «Requiem acternam»-ից հատվածներ՝ նվիրված Կոմիտաս վարդապետի անմոռանալի փոխադրմանը Փարիզից Երևան, նույն լսարանի ուսանող Բորիս Մալյանը՝ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:

* * *

Դեկտեմբերի 17-ին, շաբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

* * *

Դեկտեմբերի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Հայր մեր»-ից հետո քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Տէ՛ր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս քո խաղաղութեան» աղոթքի բնաբանով:

* * *

Դեկտեմբերի 20-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանում սկսվեցին 1977—78 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բանավոր և գրավոր քննությունները, որոնք կտևեն մինչև դեկտեմբերի 30-ը:

* * *

Դեկտեմբերի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որին ներկա են լինում ներքին թեմերի թեմական առաջնորդները, Մայր Աթոռի սրբազան հայրերը և միաբանության վարդապետ ու սարկավագ անդամները:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում պաշտվում է երեկոյան ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և բոլոր հոգևորականների մասնակցությամբ:

Այս առթիվ տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը, հանուն Վեհափառ Հայրապետի, ողջունում է Մայր Աթոռի ողջ միաբանությանը և ապա քարոզում «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ, առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք ինձէ՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց» (Մատթ. ԺԱ 29) Ավետարանի բնաբանով:

Երեկոյան ժամերգության ավարտին Վեհարանի ընդունելությանց դահլիճում գումարվում է միաբանական հերթական հավաքույթ՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Նորին Սրբությունն աղոթքով բացում է հավաքույթը, ապա հայրական սիրով ողջունում է ներկայությունը Մայր Աթոռի միաբանության բոլոր անդամների:

Այնուհետև Հայոց Հայրապետը ներկաներին խոսում է դեկտեմբերի 14-ին Մոսկվայում, ռուսական Զագորսկ վանքում, կրոնական գործիչների համագումարի մասին, որը հրավիրվել էր Նորին Սրբություն համայն Ռուսիո և Մոսկվայի Տ. Պիմեն Պատրիարքի կողմից՝ ի պաշտպանություն խաղաղության՝ ընդդեմ նեյտրոնային ռումբի արտադրության և գործադրման:

Սույն համագումարին մասնակցել է Հայոց Հայրապետը՝ ի գլուխ Մայր Աթոռի ատենադպրության:

Այնուհետև միաբանական հավաքույթի առաջին նիստում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը խոսում է 1918—1920 թվականների մեր ժողովրդի պատմության բախտորոշ իրադարձությունների մասին: Բանախոսությունից հետո տեղի է ունենում այդ հարցերի մասին մտքերի փոխանակություն:

Ժամը 20-ին միաբանական սեղանատունը Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ տեղի է ունենում միաբանական ճաշկերույթ:

Ժամը 20.30-ին գումարվում է միաբանական հավաքույթի 2-րդ նիստը, որի ընթացքում Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և պատմական գիտությունների թեկնածու, Երևանի համալսարանի դասախոս, դոցենտ Օնիկ Թոփուզյանը լրացուցիչ պատմական տեղեկություններ է հաղորդում 1918—1920 թվականների Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների մասին:

Ավելի ուշ բոլոր ներկաները Վեհարանի հանդիսությանց դահլիճում դիտում են 1976 թվականի մեռնելության նվիրված գունավոր շարժապատկերը:

Դեկտեմբերի 22-ին, հինգշաբթի օրը, կեսօրվա ժամը 12-ին, դարձյալ Վեհարանում, տեղի է ունենում միաբանական հավաքույթի վերջին նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Այս առթիվ բանախոսելու էր հրավիրվել ծանոթ մատենագետ, պրոֆ. Հակոբ Անասյանը, որը ակնարկի ձևով հետաքրքիր և բովանդակալից զեկուցում է կարդում հայ դավանաբանական գրականության մասին:

Հարգելի բանախոսն այնուհետև պատասխանում է ներկաներից շատերի հարցերին:

Հավաքույթի վերջում Վեհափառ Հայրապետն Իր օրհնության և շնորհակալության խոսքն է ասում բանախոսներին և Իր գոհունակությունը՝ հավաքույթին ներկա բոլոր միաբաններին, հատկապես շեշտելով միաբանական նման հավաքույթների գումարումը Մայր Աթոռում՝ հոգևոր և ուսուցողական նպատակների համար:

Ավելի ուշ հավաքույթի բոլոր ներկաներն աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը և լավագույն տպավորություններով հեռանում:

*
* *

Դեկտեմբերի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ս. Գայանե վանքի վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և քարոզում «Ստեփաննոս քաղցրիկ տատրակ...» տաղի բնաբանով: